ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

30 նոյեմբերի 2016 թվականի **թիվ 135** քաղ. Մոսկվա

«Եվրասիական տնտեսական միության թվային օրակարգի ձեւավորման մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշման նախագծի վերաբերյալ

Ի գիտություն ընդունելով Եվրասիական տնտեսական միության թվային տարածքի ձեւավորման վերաբերյալ առաջարկությունների մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տեղեկությունները՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. Հավանություն տալ Եվրասիական տնտեսական միության թվային օրակարգի մասին Եվրասիական տնտեսական միության պետությունների ղեկավարների հայտարարության նախագծին (կցվում է):

2. Հավանություն տալ «Եվրասիական տնտեսական միության թվային օրակարգի ձեւավորման մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշման նախագծին (կցվում է):

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում տվյալ որոշումն ընդունվելու պահից։

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Ա. Մամին**	**Օ. Պանկրատով**	**Ի. Շուվալով**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Եվրասիական տնտեսական միության թվային օրակարգի մասին

Մենք՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների՝ Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության (այսուհետ համապատասխանաբար՝ ԵԱՏՄ, անդամ պետություններ) ղեկավարներս,

հիմնվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի սկզբունքների վրա,

արձանագրելով, որ համաշխարհային տնտեսությունը գտնվում է լուրջ վերափոխումների փուլում, առօրյա կյանքում, բիզնեսի եւ պետական կառավարման ոլորտներում տեղի է ունենում թվային փոխակերպում,

հաստատելով հավատարմությունը ինտեգրման հետագա զարգացմանը, միասնական տնտեսական տարածքի ամրապնդմանը եւ անդամ պետությունների համագործակցության խորացմանը,

ընդգծում ենք անդամ պետությունների թվային տնտեսության զարգացման եւ ԵԱՏՄ թվային օրակարգի ձեւավորման անհրաժեշտությունը:

Համոզմունք ենք հայտնում, որ ԵԱՏՄ թվային օրակարգի իրականացումը կնպաստի՝

ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսական ինտեգրման նպատակների իրականացմանը, անդամ պետությունների տնտեսությունների՝ նոր տեխնոլոգիական կարգի անցնելուն՝ հաշվի առնելով այդ անդամ պետությունների ազգային շահերը.

պետական ծառայությունների տրամադրման որակի բարելավմանը.

նորարարությունների զարգացման համար բարենպաստ միջավայրի ձեւավորմանը.

թվային տնտեսության գործունեության շրջանակներում ԵԱՏՄ անդամ պետությունների շուկաների հավասար հասանելիության, բարեխիղճ մրցակցության եւ ձեռնարկատիրության զարգացման համար պայմանների ստեղծմանը.

տնտեսական գործընթացների արդյունավետության բարելավման համար պայմանների ստեղծմանը եւ ներքին ու համաշխարհային շուկաներում տնտեսավարող սուբյեկտների մրցունակության բարձրացմանը.

անդամ պետությունների քաղաքացիների կյանքի որակի, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հարցում քաղաքացիների ներգրավվածության մակարդակի բարձրացմանը, սպառողների իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանությանը, բարձրտեխնոլոգիական աշխատատեղերի ստեղծմանը:

Զգտում ենք ապահովել անհրաժեշտ պայմաններ ԵԱՏՄ թվային օրակարգի ձեւավորման համար, այդ թվում հետեւյալ կերպ՝

մշակելով ԵԱՏՄ անդամ պետությունների թվային տնտեսության նորմատիվ-իրավական բազա.

նախապատրաստելով առաջարկներ եւ իրականացնելով փորձի փոխանակում մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանության ու պաշտպանության ոլորտում.

ստեղծելով պետական-մասնավոր գործընկերություն թվային տնտեսության բնագավառում.

խթանելով եւ աջակցելով թվային նախաձեռնություններին ու նախագծերին.

նպաստելով ԵԱՏՄ անդամ պետությունների բոլոր հետաքրքրված կազմակերպությունների եւ քաղաքացիների միջեւ երկխոսությանը եւ թվային տնտեսության բնագավառում լավագույն փորձի զարգացմանը:

Համոզմունք ենք հայտնում, որ ԵԱՏՄ թվային օրակարգի ձեւավորումը կնպաստի անդամ պետությունների, տնտեսավարող սուբյեկտների եւ քաղաքացիների միջեւ բաց, լայն եւ իրավահավասար համագործակցությանը, անդամ պետություններից յուրաքանչյուրի տնտեսության արդյունավետության եւ ծավալների աճին, ԵԱՏՄ՝ տնտեսական, տեխնոլոգիական եւ սոցիալական զարգացման նոր մակարդակի անցնելուն, ինչպես նաեւ համաշխարհային թվային օրակարգի ձեւավորման հարցում ԵԱՏՄ դերի ամրապանդմանը:

Հայաստանի Հանրապետության նախագահ՝	**Բելառուսի Հանրապետության նախագահ՝**	**Ղազախստանի Հանրապետության նախագահ՝**	**Ղրղզստանի Հանրապետության նախագահ՝**	**Ռուսաստանի Դաշնության նախագահ՝**

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

« » -ի 20 թվականի **թիվ** քաղ.

Եվրասիական տնտեսական միության թվային օրակարգի ձեւավորման մասին

Ի գիտություն ընդունելով Եվրասիական տնտեսական միության թվային տարածքի ձեւավորման վերաբերյալ առաջարկությունների մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տեղեկությունները՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը **որոշեց.**

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կառավարություններին՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ մինչեւ 2017 թվականի դեկտեմբերի 1-ն ընկած ժամկետում մշակել եւ Եվրասիական միջկառավարական խորհրդի քննարկմանը ներկայացնել ԵԱՏՄ թվային օրակարգը մինչեւ 2025 թվականը իրականացնելու հիմնական ուղղությունները:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝